



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ**

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, [ss@ysmu.am](mailto:ss@ysmu.am)

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 14 ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՊԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) գիտական խորհուրդը.

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հավանություն տալ ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանի 2023 թվականի տարեկան ամփոփիչ հաշվետվությանը (կցվում է) (23-12-14-01).
2. Հաստատել «Ակադեմիական անձնակազմի մասին» կանոնակարգի փոփոխությունները (կցվում է) (23-12-14-02).
3. Հաստատել «Գիտական խորհրդի» կանոնակարգի փոփոխությունները (կցվում է) (23-12-14-03).
4. Ի գիտություն ընդունել ««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերին աշխատանքների կազմակերպման մասին» ռեկտորի հրամանի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը (կցվում է) (23-12-14-04).



5.Երաշխավորել տպագրության ներկայացված հետևյալ ուսումնական գրականությունը (23-12-14-05)՝

1) Խ.Խաչիկյանի՝ «Մաշկավեներաբանություն» (առաջին հատոր «Մաշկաբանություն» և երկրորդ հատոր «Սեռավարակաբանություն») դասագիրքը.

2) Մ. Մելքոնյանի «Կենսաօրգանական քիմիա» դասագիրքը՝ ռուսերեն լեզվով.

3) Ա. Մուրադյանի խմբագրությամբ և համատեղ ամբիոնի աշխատակազմի համահեղինակությամբ «Ուրոլոգիա և անդրոլոգիա» դասագիրքը.

4) Վ.Շեկոյանի խմբագրությամբ, հեղինակներ՝ Գ.Պողոսյանի, Մ.Հովհաննիսյանի, Լ.Սարգսյանի «Ընդհանուր մանրէաբանություն» ուսումնամեթոդական ձեռնարկը՝ հայերեն լեզվով.

5) Վ.Շեկոյանի խմբագրությամբ, հեղինակներ՝ Բ.Աբգարյանի, Դ.Մուրադյանի, Լ.Մխչյանի «Ընդհանուր մանրէաբանություն» ուսումնամեթոդական ձեռնարկը՝ ռուսերեն լեզվով.


6) Կ. Մանուկյանի խմբագրությամբ և համատեղ ամբիոնի աշխատակազմի համահեղինակությամբ «Ինֆեկցիոն հիվանդությունների մանրէաբանական ախտորոշումը» (մասնավոր բժշկական մանրէաբանություն) ուսումնական ձեռնարկը.

7) Ա. Մուրադյանի խմբագրությամբ, հեղինակներ՝ Փ.Խաչատրյանի և Կ.Միրզոյանի «Շագանակագեղձի հիվանդությունների ձևաբանական ախտորոշման հիմունքները» ուսումնական ձեռնարկը:

6.Սույն որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**



**Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ**

